ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Համլետ Գրիգորի Մկրտչյան

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ը.00.06՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝	Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թադևոսյան Զոյա Աղվանի**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դավիթ Ներսիկի Հախվերդյան**
	Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Իրինա Բորիսի Պետրոսյան**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թ. հունվարի 30-ին ժամը՝ 14[00]-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ՀՀ ԲԿԳԿ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. դեկտեմբերի 24-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր՝ **Տ. Ս. Մարտիրոսյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Ատենախոսության թեմայի արդիականությունը</u>: Համաշխարհային տնտեսությունը երբևէ չի բնութագրվել որպես անխափան կամ վերընթաց զարգացող օրգանիզմ: Հակամարտությունները, ճգնաժամերը՝ վառելիքաէներգետիկ, ֆինանսատնտեսական, աշխարհի առաջատար պետությունների միջև տնտեսական անընդհատ սրվող մրցակցությունը, քաղաքական տարաձայնությունները, ժողովրդագրական հիմնախնդիրները մշտապես սնուցել են մարտահրավերների յուրատեսակ զինանոցը՝ համաշխարհային հանրությանը մղելով դրանց հաղթահարման առավել արդյունավետ ուղիների որոնմանը:

Սկսած 1990-ական թթ. սկզբներից խաղաղ գոյակցության տրամաբանությունն իր տեղը զիջել է հակամարտություններին, որոնցում աշխարհի հզորների կողմից այս կամ այն տարածաշրջանում քաղաքական և տնտեսական իշխանության հաստատելու գաղափարախոսությունը, երբեմն թաքնված, երբեմն ակնհայտ, մղվել է առաջին պլան: Աճող և անկանխատեսելի հակամարտությունների ֆոնին համաշխարհային տնտեսության մարտահրավերների տնտեսական հետևանքներն էլ ավելի ակնհայտ են դառնում: Ռուս-ուկրաինական, պաղեստինա-իսրայելական պատերազմները, պատերազմի նոր օջախների ձևավորման հավանականությունը, COVID-19 նոր համավարակի շարունակվող հետևանքները համաշխարհային տնտեսության վրա թողնում են էական բացասական ազդեցություն: Նշվածներից Նոր համավարակն առանձնանում է համաշխարհային տնտեսության վրա թողած բացասական ազդեցության հսկայական ծավալով: Այն բնութագրվում է և՛ ժողովրդագրական, և՛ տնտեսական, և՛ սոցիալ-հոգեբանական ահռելի հետևանքներով, հետևանքներ, որոնք, ընդհանուր առմամբ, կարելի է դիտարկել որպես 21-րդ դարի աղետալի մարտահրավերներ:

Երկիր մոլորակի գրեթե յուրաքանչյուր պետության համար տնտեսական մարտահրավերներին, արտաքին շոկերին դիմակայելը մղվել է առաջին պլան: Արտաքին շոկերի ազդեցության մեղմացումը, և, միևնույն ժամանակ, հատկապես փոքր տնտեսություն, ներքին նեղ շուկա ունեցող երկրների պարագայում, կարևոր նշանակություն է ստանում տնտեսության արտահանելի հատվածի միջոցով՝ շուկաների և ապրանքների դիվերսիֆիկացման ուղիով տնտեսական աճի ապահովումը:

Աշխարհում տեղի ունեցող գլոբալ շրջադարձերը, արտաքին մարտահրավերները, չէին կարող չանդրադառնալ նաև ՀՀ սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակի վրա: Արցախյան 44-օրյա պատերազմից հետո փոփոխության ենթարկվեց ոչ միայն ՀՀ միջազգային, այլև ներքին իրավիճակը: Ուստի, երկրի ներսում վերափոխումներ հնարավոր չէ իրականացնել, առանց հաշվի չառնելու նրա ոչ միայն աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական դիրքը, այլև տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական հիմնախնդիրների ծավալներն ու դրանց լուծման հնարավորությունները և, առաջին հերթին, մարդկային կապիտալի հնարավորությունները: ՀՀ կողմից արտաքին մարտահրավերներին դիմակայումն ունի նաև արտաքին անվտանգային նշանակություն, որը սերտորեն առնչվում է արտաքին առևտրային անվտանգությանը: Իր հերթին, արտաքին առևտրի անվտանգությունը պետության արտահանման և (կամ) ներմուծման գործառնությունների պաշտպանվածությունն է տարբեր արտաքին սպառնալիքների, մարտահրավերների և ռիսկերի ազդեցությունից, ինչը բարենպաստ պայմաններ է ապահովում պետության զարգացման համար: Արտաքին առևտրի ոլորտում արդյունավետ քաղաքականություն իրականացնելը պետության արտաքին տնտեսական գործունեության հիմնական բաղադրիչներից մեկն է, որում կարևորվում է արտաքին շուկաների դիվերսիֆիկացումը: Սակայն, հարկ է փաստել, որ մեզանում արտահանման շուկաների և

ապրանքախմբերի դիվերսիֆիկացման հիմնախնդրի լուծման ուղղությամբ երկարատև ժամանակաշրջանում գործնական, հետևողական քայլեր չեն ձեռնարկվել:

Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության, երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման ներկայիս միտումները, որոնք բնութագրվում են պետությունների միջև հարաբերությունների երկիմաստությամբ, կոնֆլիկտային ներուժի աճով, առևտրային պատերազմների նախադեպերով, պատժամիջոցների խախտումներով, ի վերջո, կարելի է եզրակացնել, որ չնայած միջազգային առևտրին մասնակցելու մեծաթիվ առավելություններին՝ պետության տնտեսական անվտանգության համար կան նաև զգալի սպառնալիքներ: ՀՀ տնտեսության վրա տնտեսական շոկերի ազդեցության գնահատումը, արտաքին շոկերի փոխանցման ուղիների, տնտեսության խոցելիության, ըստ առաջնային ոլորտների արտահանման և ներմուծման մրցակցային առավելությունների բացահայտումը՝ արտաքին շուկաների դիվերսիֆիկացման և համաշխարհային մարտահրավերներին, սպառնալիքներին դիմակայելու տեսանկյունից ունի կենսական նշանակություն: ***Դրանով է բացատրվում սույն ատենախոսության հրատապությունը և արդիականությունը:***

<u>Հետազոտության օբյեկտը և առարկան:</u> Հետազոտության օբյեկտը համաշխարհային տնտեսության մարտահրավերներից բխող՝ ՀՀ տնտեսության զարգացման առաջնահերթություններն են, իսկ ուսումնասիրության առարկան ՀՀ արտաքին առևտրային հարաբերությունների զարգացման սպառնալիքների հաղթահարման լույսի ներքո՝ տնտեսական կապերի դիվերսիֆիկացման հնարավորությունների բացահայտումն է:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u> Սույն հետազոտության նպատակը համաշխարհային մարտահրավերների նկատմամբ ՀՀ տնտեսության խոցելիության և դրանց ազդեցության վերլուծության արդյունքում ՀՀ տնտեսական զարգացման առաջնահերթությունների ձևակերպումն է՝ ՀՀ տնտեսական աճի տեսանկյունից էական նշանակություն ունեցող ոլորտների կտրվածքով:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակներում սահմանվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել և վերհանել ժամանակակից համաշխարհային տնտեսության մարտահրավերները, առանձին ազգային տնտեսությունների խոցելիությունը կանխատեսող ցուցանիշները և զարգացման առաջնահերթությունները, ինչպես նաև էմպիրիկ գնահատականների հիման վրա պարզաբանել ՀՀ տնտեսության վրա արտաքին շոկերի ազդեցության փոխանցման հիմնական ուղիները,
- ուսումնասիրել և քննական վերլուծության հիման վրա բացահայտել ներմուծման, արտահանման, ինչպես նաև հանքարդյունաբերության ու զբոսաշրջության ոլորտների աճի հիման վրա պայմանավորված տնտեսական աճի հիփոթեզների վավերականությունը (այլ երկրների օրինակով),
- պարզաբանել ՀՀ մրցակցային առավելությունները՝ արտահանվող ապրանքախմբերի քարտեզավորման և մի շարք ինդեքսների հաշվարկման հիման վրա, մատնանշել առկա մարտահրավերները և արտահանման դիվերսիֆիկացման հնարավորությունները,
- ուսումնասիրել համաշխարհային զարգացումների ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա, բացահայտել վերջինիս խոցելիությունը և դերը տնտեսության մեջ, ինչպես նաև տնտեսաչափական գնահատման արդյունքում որոշակիացնել ոլորտի զարգացման առաջնահերթությունները,

- բացահայտել համաշխարհային զարգացումների ազդեցությունը ՀՀ մետաղական հանքաքարի արդյունահանման, ինչպես նաև ոլորտի խոցելիության վրա,
- գնահատել ներմուծման և զբոսաշրջության՝ որպես ՀՀ տնտեսական աճի ապահովման գործոնների դերը և զարգացման առաջնահերությունները,
- գնահատել մետաղական հանքաքարի արդյունահանման դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում, տնտեսաչափական գնահատման արդյունքում որոշակիացնել ոլորտի զարգացման, այդ թվում ներդրումային միջավայրի առաջնահերթությունները:

<u>Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը:</u>

Վերը նշված խնդիրների լուծման համար ատենախոսությունում կիրառվել են գիտական ճանաչողության մի շարք մեթոդներ, մասնավորաբար՝ դասակարգման, վերլուծության, համադրման, համեմատական վերլուծության, վիճակագրական, գրաֆիկական մեկնաբանման և տնտեսաչափական մեթոդները: Ռեգրեսիոն հավասարումների միջոցով, երկարաժամկետ հատվածում, գնահատվել է ապրանքների և ծառայությունների ներմուծման, զբոսաշրջիկների կողմից ՀՀ տարածքում կատարվող ծախսերի, մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտը ներկայացնող ընկերությունների արտահանման դերը իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունները բացատրելու գործում:

Նույն մեթոդով գնահատվել են նաև ապրանքների և ծառայությունների իրական[1] արտահանման, տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի դերը՝ ապրանքների և ծառայությունների ներմուծման և ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի, զբոսաշրջիկների կողմից ՀՀ տարածքում կատարվող ծախսերի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունների դերը բացատրելու գործում: Հետազոտության համար հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայրենական տնտեսագետների բազմաթիվ աշխատությունները, գիտական հոդվածները, հետազոտությունները, ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումները, օրենսդրական այլ ակտեր, միջազգային ֆինանսական և դոնոր կազմակերպությունների (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն) հետազոտական նյութերը, զեկույցները, վերլուծության հաշվետվությունները: Աշխատանքի տեղեկատվական հիմքը ՀՀ Վիճակագրական կոմիտեի (ՀՀ ՎԿ), ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ), վիճակագրական տվյալների բազաներն են, Համաշխարհային բանկի, Առևտրի համաշխարհային կազմակերպության և ՄԱԿ-ի «UN Comtrade» առցանց տվյալների բազաները և զեկույցները:

<u>Ատենախոսության գիտական նորույթը:</u> Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- ՀՀ-ից արտահանվող ապրանքախմբերի քարտեզավորման և մի շարք ինդեքսների հաշվարկների հիման վրա, բացահայտվել են, մրցակցային առավելություն ունեցող ապրանքային խմբերը և որոշակիացվել են տնտեսության, արտաքին շուկաների և արտահանման բազմազանեցման (դիվերսիֆիկացման) մոտեցումները:

[1] Եթե ատենախոսության մեջ որևէ այլ բան չի նշվում, ապա համապատասխան փոփոխականների կամ ցուցանիշների արժեքներն իրական են:

- Տնտեսաչափական մոդելների միջոցով գնահատվել է մի շարք գործոնների՝ ներմուծման, արտահանման, տնային տնտեսությունների կողմից վերջնական սպառման վրա ուղղվող ծախսերի դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման վրա:
- Տնտեսաչափական գործիքակազմի կիրառմամբ գնահատվել է ՀՀ զբոսաշրջության ոլորտի նպաստումը տնտեսական աճին, բացահայտվել է արտաքին շոկերի նկատմամբ ոլորտի խոցելիությունը:
- Հանքագործական արդյունաբերության հարկմանն առնչվող օրենսդրական փոփոխությունների ազդեցության վերլուծության և տնտեսաչափական գնահատման արդյունքում բացահայտվել է մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտը ներկայացնող ընկերությունների դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում, մատնանշվել են մարտահրավերները և առաջարկվել են ոլորտի զարգացման հնարավոր միջոցառումները:

<u>Հետազոտության գործնական նշանակությունը:</u> Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել ՀՀ կառավարության կողմից ռազմավարական ծրագրերի մշակման համար, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տնտեսական քաղաքականության և ՀՀ Անվտանգության խորհրդի ռազմավարական նոր մոտեցումների մշակման և ներդրման, ինչպես նաև տնտեսաչափական գործիքակազմով ստացված քանակական գնահատականների, մեր կողմից նախանշված սցենարային վերլուծությունների արդյունքների և որակական գնահատումների հիման վրա ոլորտային պետական մարմինների որոշումների կայացման համար:

<u>Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:</u> Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Շենսի նահանգի Յանլին շրջանում կազմակերպված «Preliminary Schedule of Seminar on Development Paths and Economic Construction for B&R Countries» դասընթացի, ինչպես նաև ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի նիստերի ընթացքում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ամփոփվել են 5 հոդվածներում, որոնցից 2-ը տպագրվել է Scopus միջազգային գիտաչափական շտեմարաններում, իսկ 3-ը ՌԴ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից՝ թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների արդյունքների տպագրման համար ընդունելի համարվող գիտական հրատարակությունների ցանկում (K-2), աշխատանքի որոշակի դրույթներ էլ տպագրվել են «Կովկասի ժամը» (Caucasus Watch) գերմանական գիտահանրամատչելի պարբերականում (որպես փորձագիտական կարծիք):

<u>Ատենախոսության կառուցվածքը:</u> Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Տեքստը կազմում է 149 էջ՝ առանց հավելվածի:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **առաջաբանում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորույթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ ***«Արտաքին շոկերը որպես տնտեսության զարգացման մարտահրավերներ և տնտեսական աճի հնարավորություն»*** գլխում ներկայացվել են վերջին ժամանակաշրջանի տնտեսական արտաքին մարտահրավերները, տնտեսության խոցելիությունը կանխատեսող ցուցանիշները: Արտաքին շոկերի բացասական ազդեցությունը ՀՀ տնտեսություն փոխանցվում է, մասնավորապես, ճգնաժամերով պայմանավորված մի շարք ուղիների միջոցով: Այդ համատեքստում՝ որպես ֆինանսատնտեսական ճգնաժամ կանխատեսող ընդունելի ցուցանիշ, կարելի է համարել ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը, որը ՀՀ պարագայում հիմնականում պայմանավորված է եղել ներմուծման ծավալների փոփոխությամբ: Այնուհետև, մի շարք գիտական հետազոտությունների ուսումնասիրության արդյունքում (ներառյալ էմպիրիկ գնահատումների արդյունքները) հեղինակի կողմից ներկայացվել են ՀՀ տնտեսության վրա արտաքին շոկերի փոխանցման հիմնական ուղիները և դրանց ազդեցությունը տնտեսության վրա:

Արտահանման ծավալների աճը հնարավորություն կտա ապահովել ավելի բարձր տնտեսական աճի տեմպեր, միևնույն ժամանակ, եթե տնտեսական աճը պայմանավորված լինի հատկապես մեկ ապրանքի և/կամ ծառայության արտահանման ծավալների աճով, ապա դա կհանգեցնի մեկ երկրից ՀՀ կախվածությանը, որը ոչ այլ ինչ է, քան տնտեսական սպառնալիք: Միջանկյալ սպառման համար նախատեսված ապրանքների և տեխնոլոգիաների ներմուծումն, իր հերթին, խթանում է ինչպես տնտեսական աճը, այնպես էլ արտահանման ծավալների ավելացումը: Ուստի, կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում առաջին պլան է մղվում ոչ միայն արտահանման ծավալների աճի խթանումը, այլև միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում արտահանման շուկաների և արտահանման կառուցվածքի դիվերսիֆիկացման հիմնախնդրի լուծումը:

Հեղինակի կողմից ներկայացվել են նաև տնտեսության հիմնական առաջնահերթությունները, ինչպես նաև ներմուծման, արտահանման, հանքարդյունաբերության ու զբոսաշրջության վրա հիմնված աճի հիփոթեզները՝ աշխարհի տարբեր երկրների և երկրների խմբերի օրինակներով: Բացահայտվել է, որ զբոսաշրջությունը և, մասնավորաբար, զբոսաշրջիկների կողմից կատարվող ծախսերը, ինչպես նաև հանքագործական արդյունաբերությունը ներկայացնող ընկերությունների արտադրանքի արտահանման ծավալների աճն, ընդհանուր առմամբ, դրական են ազդում երկրների տնտեսական աճի վրա: Իր հերթին, ներմուծման ծավալների աճը երկրներին հնարավորություն է տալիս բարձրացնել արտադրողականությունը և զբաղվել նորարարություններով, ինչն էլ երկարաժամկետ հատվածում ապահովում է տնտեսական աճ:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Համաշխարհային զարգացումները, ՀՀ տնտեսության խոցելիությունը և հնարավորությունները՝ ըստ առաջնահերթ ոլորտների»*** գլխում, հեղինակն ուսումնասիրել է ՀՀ մրցակցային առավելություններ ունեցող ապրանքային խմբերը, իրականացրել է արտահանվող ապրանքախմբերի քարտեզավորում, ինչպես նաև ուսումնասիրել է արտաքին մարտահրավերների ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի և մետաղական հանքաքարի արդյունահանման ընկերությունների վրա:

Բ. Բալասսայի (RCA) ինդեքսի հիման վրա 2018-2022 թթ. և 2018-2022 թթ. ինդեքսների միջին արժեքների համեմատությամբ բացահայտվել են 10 ապրանքային խմբեր, որոնք ունեցել են թույլ համեմատական առավելություններ ընտրված ժամանակահատվածի որևէ մեկ տարում, սակայն հետագայում չեն շարունակել ունենալ թույլ և/կամ միջին համեմատական առավելություն 6 խմբի պարագայում, իսկ 4 խմբի պարագայում

միայն 2022 թ.-ին է արձանագրվել թույլ համեմատական առավելություն (տե՛ս աղյուսակ 1):

***Աղյուսակ 1.* Բալասսայի (RCA) ինդեքսի հիման վրա համեմատական առավելություններ ունեցող ապրանքային խմբերը**[2]

Ծած.	Խումբ	2018	2019	2020	2021	2022	2018-2021 թթ. միջին	2018-2022 թթ. միջին
1	Կենդանի կենդանիներ		++	+++	+++	++	++	++
3	Ձուկ և խեցգետնակերպեր, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ	+	+	++	++	++	++	++
4	Կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր, կենդանական ծագման սննդամթերք՝ այլ տեղում չնշված կամ չներառված				+	+		+
6	Կենդանի ծառեր և այլ բույսեր, կոճղեզներ և բույսերի այլ նույնանման մասեր. հատած ծաղիկներ և զարդաբույսեր	++	++	++	++	++	++	++
7	Բանջարեղեն և որոշ ուտելի արմատապտուղներ և պայարապտուղ	++	++	++	+++	++	++	++
8	Ուտելի մրգեր և ընկույզներ. ցիտրուսային պտուղների կեղև ու դդմի կճեպներ	+	+	++	++	++	++	++
9	Սուրճ, թեյ, մատե կամ պարագվայական թեյ և համեմունքներ					+		
16	Պատրաստի սննդամթերք մսից, ձկից կամ խեցգետնանմաններից, կակղամարմիններից և ջրային այլ անողնաշարավորներից	+	+	+	+		+	+
18	Կակաո և դրանից պատրաստված մթերք	++	++	+	++	+	++	++
20	Բանջարեղենի, մրգերի, ընկույզների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից ստացվող մթերք	++	++	++	+++	+++	++	++
22	Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ և քացախ	+++	+++	+++	+++	+++	+++	+++
23	Սննդային արդյունաբերության մնացորդներ և թափոններ. պատրաստի կերեր՝ կենդանիների համար					+		
24	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	+++	+++	+++	+++	+++	+++	+++
25	Աղ, ծծումբ, հող և քար, ցեփագործական նյութեր, կիր և ցեմենտ	+	+	+	+		+	+
26	Հանքաքարեր, խարամ և մոխիր	+++	+++	+++	+++	+++	+++	+++
45	Խցան և դրանից պատրաստված արտադրատեսակներ					+		
57	Գորգեր և հատակի այլ մանածագործական ծածկույթներ					+		
60	Տրիկոտաժե պաստառներ՝ մեքենայագործ կամ ձեռագործ	+						
61	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ՝ մեքենայագործ կամ ձեռագործ	++	+	+	+		+	+
62	Հագուստ և հագուստի պարագաներ՝ բացի տրիկոտաժե մեքենայագործ կամ ձեռագործ հագուստից և պարագաներից	+++	+++	++	+++	++	+++	+++
66	Հովանոցներ, արևապաշտպան հովանոցներ, ձեռնափայտեր, ձեռնափայտ-նստոցներ, ճիպոտներ, մտրակներ ձիավարության համար և դրանց մասերը			+				
68	Արտադրատեսակներ քարից, գիպսից, ցեմենտից, ասբեստից, փայլարից կամ նույնանման նյութերից	+						
70	Ապակի և դրանից պատրաստված արտադրատեսակներ	+		+	+		+	+
71	Մարգարիտ՝ բնական կամ աճեցրած, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, մետաղներ՝ երեսապատված թանկարժեք մետաղներով, և դրանցից պատրաստված արտադրատեսակներ, բիժուտերիա, մետաղադրամներ	++	+++	++	++	+++	++	+++
72	Սև մետաղներ	++	++	++	++	++	++	++
74	Պղինձ և պղնձից արտադրատեսակներ	++					+	+
76	Ալյումին և դրանից պատրաստված արտադրատեսակներ	++	++	+++	+++	++	+++	++
78	Կապար և արտադրատեսակներ դրանից				+			
91	Բոլոր տեսակի ժամացույցներ և դրանց մասերը	+++	+++	+++	+		+++	++
96	Պատրաստի տարբեր արտադրատեսակներ	+						

ՀՀ-ի արտահանման կառուցվածքում, ընտրված ողջ ժամանակահատվածում, ինչպես նաև 2018-2022 թթ. ինդեքսների միջին արժեքներով, ուժեղ բացահայտված

[2] ՄԱԿ-ի «UN Comtrade» առցանց տվյալների բազա, https://comtradeplus.un.org/: Հեղինակի սեփական հաշվարկ: Խմբերի ծածկագրերը համապատասխանում են «Ներդաշնակեցված համակարգի» ապրանքային խմբերի ծածկագրերին 2-նիշ մակարդակում: Նշում՝ (+) նշանակում է թույլ համեմատական առավելություն, (++)՝ միջին համեմատական առավելություն, (+++)՝ ուժեղ համեմատական առավելություն:

համեմատական առավելություն են ունեցել «Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ և քացախ», «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ», «Հանքաքարեր, խարամ և մոխիր», ինչպես նաև «Հագուստ և հագուստի պարագաներ՝ բացի տրիկոտաժե մեքենայագործ կամ ձեռագործ հագուստից և պարագաներից» (բացառությամբ 2020 թ. և 2022 թ.-ին այս ապրանքախմբի պարագայում դիտարկվել է միջին և բացահայտված համեմատական առավելություն) ապրանքախմբերը: Իսկ միջին և թույլ համեմատական առավելություն է գրանցվել գյուղատնտեսության, սննդամթերքի և հագուստի արտադրության (տրիկոտաժե), ոլորտներում:

Բացահայտված սիմետրիկ համեմատական առավելությունների ինդեքսի (RSCA), նորմալացված բացահայտված համեմատական առավելությունների ինդեքսի (NRCA) և առևտրային հաշվեկշռի ինդեքսի (TBI) համակցման միջոցով իրականացվել է ապրանքների քարտեզավորում 2018-2022 թթ., ինչպես նաև 2018-2022 թթ. ինդեքսների միջին արժեքների կտրվածքով՝ ՀՀ-ից արտահանվող ապրանքային խմբերի համար, որոնք դասակարգվել են 4 խմբերում (A, B, C, D), (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2. **Ապրանքախմբերի քարտեզավորման արդյունքներն ըստ խմբերի**[3]

Բացահայտված սիմետրիկ համեմատական առավելությունների ինդեքս (RSCA) *Նորմալացված բացահայտված համեմատական առավելությունների ինդեքս (NRCA)*	**RSCA > 0** **NRCA > 0**	**Խումբ B** **2018 թ.** *8, 16, 18, 25, 42, 60, 61, 68, 70, 96* **2019 թ.** *6, 8, 16, 18, 25, 61, 76* **2020 թ.** *8, 16, 18, 25, 61, 66, 70, 72, 76* **2021 թ.** *4, 6, 8, 16, 18, 25, 61, 70* **2022 թ.** *4, 6, 8, 9, 18, 23, 45, 57, 76* **2018-2022 թթ. միջին** *4, 6, 8, 16, 18, 25, 61, 70, 76*	**Խումբ A** **2018 թ.** *3, 6, 7, 20, 22, 24, 26, 62, 71, 72, 74, 76, 91* **2019 թ.** *1, 3, 7, 20, 22, 24, 26, 62, 71, 72, 91* **2020 թ.** *1, 3, 6, 7, 20, 22, 24, 26, 62, 71, 91* **2021 թ.** *1, 3, 7, 20, 22, 24, 26, 62, 71, 72, 76, 78, 91* **2022 թ.** *1, 3, 7, 20, 22, 24, 26, 62, 71, 72* **2018-2022 թթ. միջին** *1, 3, 7, 20, 22, 24, 26, 62, 71, 72, 91*
	RSCA < 0 **NRCA < 0**	**Խումբ D** **2018 թ.** *1, 2, 4, 5, 9, 10, 11, 12, 15, 17, 19, 21, 23, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 63, 64, 65, 66, 67,69, 73, 75, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 92, 94, 95, 97, 99* **2019 թ.** *2, 4, 5, 9, 10, 11, 12, 15, 17, 19, 21, 23, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 73, 78, 79, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 90, 92, 94, 95, 96, 97, 99* **2020 թ.** *2, 4, 5, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 17, 19, 21, 23, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 63, 64, 65, 67, 68, 69, 73, 79, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 90, 92, 94, 95, 96, 99* **2021 թ.** *2, 5, 9, 10, 11, 12, 13, 15, 17, 19, 21, 23, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 48, 49, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 73, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 92, 94, 95, 96, 97, 99* **2022 թ.** *2, 5, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 19, 21, 25, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 46, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 58, 59, 60, 61, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 73, 75, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 94, 95, 96, 97, 99* **2018-2022 թթ. միջին** *2, 5, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 17, 19, 21, 23, 25[4]*, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 73, 75, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 92, 94, 95, 96, 97, 99*	**Խումբ C** **2018 թ.** - **2019 թ** *47, 74, 88* **2020 թ.** *74, 97* **2021 թ.** *47, 74* **2022 թ.** *47, 74, 78* **2018-2022 թթ. միջին** *47,74*
		TBI < 0	TBI > 0
		Առևտրային հաշվեկշռի ինդեքսը (TBI)	

[3] ՄԱԿ «UN Comtrade» առցանց տվյալների բազա, https://comtradeplus.un.org/: Հեղինակի հաշվարկ: Խմբերի ծածկագրերը համապատասխանում են ԱՏԳ ԱԱ ստանդարտ ապրանքային խմբերի ծածկագրերին 2-նիշ մակարդակում:

[4] *Նշում, միայն RSCA-ի համաձայն:

Ինչ վերաբերում է ՀՀ-ում դիվերսիֆիկացման մակարդակին, ապա 2018-2022 թթ. ընթացքում արտահանվող ապրանքային դիրքերի քանակը (4-նիշ դասակարգմամբ) 812-ից դարձել է 924 (աճը կազմել է 12%), 2018 թ.-ի համեմատ 5-ով ավելացել է նաև երկրների թիվը և արդեն 2022 թ.-ին դարձել է 112 (տե՛ս աղյուսակ 3): 2022 թ.-ին շուկաների կենտրոնացվածության ինդեքսը կազմել է 0.427, ինչն արտացոլել է դեպի ՌԴ ավելի շատ ապրանքներ և, որոշների դեպքում, ավելի մեծ ծավալի հասնող արտահանման մասին: Միևնույն ժամանակ, 2018-2022 թթ. ընթացքում ՀՀ ապրանքների կենտրոնացվածության ինդեքսը տատանվել է 0.259 - 0.276 միջակայքում, միայն 2022 թ.-ին այս ցուցանիշը դարձել է 0.184[5]:

Աղյուսակ 3. **Նորմալացված Հերֆինդալ-Հիրշմանի շուկաների և ապրանքների կենտրոնացվածության ինդեքսները[6]**

	2018	2019	2020	2021	2022
Շուկաների կենտրոնացվածության ինդեքս	0.279	0.294	0.295	0.287	0.427
Ապրանքների կենտրոնացվածություն ինդեքս	0.259	0.276	0.275	0.276	0.184
Ապրանքային դիրքեր (4-նիշ դասակարգմամբ)	812	778	796	783	924
Երկրների քանակ	107	101	105	109	112
ՌԴ արտահանումը ընդհանուրի մեջ	27.61%	28.01%	26.82%	27.87%	45.45%

Պատմականորեն ՌԴ-ից ժամանած սփյուռքահայերի ավելի երկար մնալը և հարազատների/ընկերների հետ ապրելը և/կամ բնակարանների վարձակալումը[7] հիմնավորում է այն հանգամանքը, թե ինչու է մնալու միջին տևողությունը այստեղ ավելի մեծ, քան ԵՄ անդամ երկրներում (25 օրը՝ 16.11 օրվա համեմատ 2022 թ.-ին, իսկ 2023 թ.-ին՝ 25 օրը՝ 15.33 օրվա համեմատ)[8]:

Աղյուսակ 4. **Մեկ այցելուի հաշվով միջին օրական ծախսերը ըստ երկրների և տարածաշրջանների 2020-2023 թթ. (ԱՄՆ դոլար)[9]**

Երկիր/տարածաշրջան	2020	2021	2022	2023
ՌԴ	29.53	35.82	58.57	51.96
ԵՄ	39.14	45.36	90.89	84.72
Ֆրանսիա	27.49	34.44	61.01	59.04
Իտալիա	56.95	35.82	91.52	118.09
Գերմանիա	31.89	47.13	81.35	76.41
Նիդերլանդներ	25.72	33.16	56.32	51.96
Արևմուտք	36.95	42.97	85.01	80.86
Իրան	19.93	35.82	56.32	46.39
Վրաստան	22.15	24.87	47.24	43.30
ՀՀ միջին	20.98	28.89	47.24	44.79

[5] ՄԱԿ-ի «UN Comtrade» առցանց տվյալների բազա, https://comtradeplus.un.org/: Հեղինակի սեփական հաշվարկ:

[6] ՀՀ ՎԿ-ի «Արտաքին առևտրի տվյալների բազա ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման», առցանց տվյալների բազա, https://armstat.am/am/?nid=148, և ՀՀ ՎԿ-ի «Արտաքին առևտրի տվյալների բազա ըստ երկրների», https://armstat.am/am/?nid=717: Հեղինակի սեփական հաշվարկ:

[7] Huescar, A., Cornelio, B., Avetyan, D., & Pragma Corporation. (2014). *Armenian International Visitor Survey (2013): Report of Results*. Yerevan, Armenia: USAID Enterprise Development and Market Competitiveness Project. pp. 14-16, Available at: https://armstat.am/file/article/rep_mig_2013_e.pdf.pdf. (Date of access: July 24, 2024). Makaryan, A., Matevosyan, D., & Mkrtchyan, H. (2024, June 16). Russian tourist vs. Western visitor (EU): Balancing Armenia's tourism strategy. *Caucasus Watch*. Available at: https://caucasuswatch.de/en/insights/russian-tourist-vs-western-visitor-eu-balancing-armenias-tourism-strategy.html. (Date of access: July 24, 2024).

[8] ՀՀ ՎԿ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույց, Երևան, 2024 թ. էջ 167-171:

[9] ՀՀ ՎԿ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021, 2022, 2023 թվականների հունվար-դեկտեմբերին, 2022 թ., 2023 թ., 2024 թ., համապատասխանաբար էջեր՝ 141-149, 160-169, 162-171, Երևան: ՀՀ ՎԿ-ի «Վճարային հաշվեկշիռ 6» առցանց տվյալների բազա, https://www.armstat.am/am/?nid=203: Makaryan, A., Matevosyan, D., & Mkrtchyan, H. (2024, June 16). Russian tourist vs. Western visitor (EU): Balancing Armenia's tourism strategy. *Caucasus Watch*. Available at: https://caucasuswatch.de/en/insights/russian-tourist-vs-western-visitor-eu-balancing-armenias-tourism-strategy.html. (Date of access: July 24, 2024): Հեղինակի սեփական հաշվարկ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում, ռուսաստանցի այցելուների միջին օրական ծախսը ԵՄ անդամ այնպիսի երկրներից, ինչպիսիք են Իտալիան, Գերմանիան և Ֆրանսիան, շատ ավելի ցածր է, և մի փոքր ավելի բարձր է, քան Վրաստանի և Իրանի այցելուների ծախսերն են (տե՛ս աղյուսակ 4): Իտալացի այցելուների միջին օրական ծախսերի նման բարձր արժեքը (2022 թ.-ին՝ 91.52 ԱՄՆ դոլար, իսկ 2023 թ.-ին՝ 118.09 ԱՄՆ դոլար) հիմնավորվում է կացության ավելի կարճ տևողությամբ (2022 թ.՝ 16 օր, իսկ 2023 թ.՝ 11 օր)[10] և Ֆրանսիայից և Նիդերլանդներից ժամանածների համեմատությամբ Իտալիայից ժամանած զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակում սփյուռքահայ այցելուների ավելի ցածր տեսակարար կշռով[11]:

Աղյուսակ 4-ի տվյալները համադրելով այցելուների՝ ՀՀ տարածքում միջին տևողության տվյալների և ըստ երկրների այցելուների քանակի, ինչպես նաև այցելուների ընդհանուր կառուցվածքում[12] վերջիններիս տեսակարար կշիռների հետ, պարզ է դառնում, որ ՀՀ զբոսաշրջության ոլորտը հատկապես խոցելի է ՌԴ-ից զբոսաշրջիկների բավականին մեծ կրճատման հանդեպ: Իսկ եթե վերջինս ուղեկցվի այլ երկրներից՝ հատկապես ԵՄ-ից, ինչպես նաև միջինից բարձր եկամտի մակարդակ ունեցող երկրներից զբոսաշրջիկների քանակի աճով, ապա այդ աճը կարող է որոշակիորեն փոխհատուցել այն կորուստը, որը կարձանագրվի ՌԴ-ից այցելուների քանակի կրճատմամբ: Հետևաբար, եթե ՌԴ տնտեսական շոկով պայմանավորված ՀՀ-ում այցելուների ծախսերի անկում արձանագրվի, ապա վերջինս կարող է զգալի լինել միայն այն պարագայում, երբ ՌԴ քաղաքացի համարվող այցելուների մոտ 30-40% անկում գրանցվի (և հայկական արմատներով այցելուների քանակը մնա համեմատաբար կայուն վիճակում) և դա էլ չուղեկցվի այլ երկրներից այցելուների քանակի կտրուկ աճով՝ հատկապես ոչ սփյուռքահայ: Այդ իսկ պատճառով, այս պարագայում, վճռորոշը լինելու է փոխարժեքի ուղին՝ որպես ՌԴ տնտեսական աճի շոկի բացասական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա տարածող ուղի: ՌԴ տնտեսական աճի շոկի ազդեցությունը կարող է, ընդհանուր առմամբ, ՀՀ տնտեսության վրա ավելի խորը լինել, քան զբոսաշրջության վրա, եթե այլ երկրներում, որտեղից հիմնականում այցելությունները ժամանում են ՀՀ, միաժամանակ տնտեսական անկում չգրանցվի: Իսկ ՌԴ տնտեսական աճի շոկի ազդեցությունը ՀՀ զբոսաշրջության ոլորտի վրա պայմանավորված է լինելու այն հանգամանքով, թե ՀՀ դրամը ՌԴ ռուբլու նկատմամբ որքան կամրապնդվի:

Մյուս կողմից ՀՀ զբոսաշրջության ոլորտը բավականաչափ զգայուն է արտաքին մարտահրավերներով պայմանավորված իրավիճակային փոփոխությունների հանդեպ, որը ակնհայտ դրսևորվել էր Նոր համավարակի պայմաններում: Եթե նման համավարակ կրկնվի կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում, ապա վերջինիս ազդեցությունն ավելի զգալի է լինելու, իսկ կառավարության աջակցության չափը՝ ավելի մեծ, քան պահանջվել է 2020 թ.-ի համավարկի հետևանքները հաղթահարելու ժամանակ: Նույն մոտեցմամբ, եթե համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ արձանագրվի, դա ևս ՀՀ տնտեսության վրա կունենա բացասական հետևանքներ:

---

[10] ՀՀ ՎԿ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թվականի հունվար-դեկտեմբերին, տեղեկատվական ամսական զեկույց, Երևան, 2024 թ. էջ 167-171:

[11] Huescar, A., Cornelio, B., Avetyan, D., & Pragma Corporation. (2014). *Armenian International Visitor Survey (2013): Report of Results*. Yerevan, Armenia: USAID Enterprise Development and Market Competitiveness Project. p. 32, Available at: https://armstat.am/file/article/rep_mig_2013_e.pdf.pdf. (Date of access: July 24, 2024).

[12] ՀՀ ՎԿ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021, 2022, 2023 թվականների հունվար-դեկտեմբերին, 2022 թ., 2023 թ., 2024 թ., համապատասխանաբար էջեր՝ 141-149, 160-169, 162-171, Երևան:

Մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտի ընկերությունների պարագայում 2021-2022 թթ. հարկային համակարգի կտրվածքով տեղի ունեցած փոփոխությունները բացասաբար կարող են ազդել ոլորտի ներդրումային գրավչության վրա՝ օրենսդրության կայունության տեսանկյունից: Դեպի երրորդ երկրներ արտահանելու դեպքում կիրառվող արտահանման տուրքերը (տե՛ս աղյուսակ 5) բավականին մեծ հարկային բեռ են հանդիսացել ընկերությունների վրա, իսկ ռոյալթիի նոր հիբրիդային համակարգի ներդրումը ավելի է մեծացրել ռոյալթիի վճարների մասնաբաժինը ընկերությունների կողմից վճարվող հարկերի մեջ, հատկապես համաշխարհային շուկայում մետաղների գների բարձրացման պարագայում՝ ավելի պրոցիկլիկ դարձնելով հարկաբյուջետային քաղաքականությունը (համաշխարհային շուկայում գների կտրուկ բարձրացմամբ պայմանավորված արտահանման ծավալների կտրուկ աճի դեպքում), ինչն էլ կարող է բացասաբար անդրադառնալ ներդրողների ներգրավման գործընթացի վրա:

Աղյուսակ 5. **Ընկերությունների կողմից երրորդ երկրներ արտահանելու նպատակով վճարման ենթակա տուրքեր (մլրդ ՀՀ դրամ)[13]**

Ժամանակահատված	Արտահանման ծավալներ (մետրիկ տոննա)		Վճարմանը ենթակա տուրքեր (մլրդ ՀՀ դրամ)		ՀՀ դրամի միջին ամսական փոխարժեքը	Մեկ տոննայի միջին գինը (ՀՀ դրամ)		Մեկ տոննայի տուրք/գին հարաբերակցությունը	
	2603	2613	2603	2613	1 ԱՄՆ դոլար	2603	2613	2603	2613
Հոկտեմբեր 2021	24,381.1	104.1	3.90	0.08	479.25	840,372	7,370,470	19.0%	10.9%
Նոյեմբեր 2021	32,168.5	600.5	5.15	0.48	477.66	973,739	6,762,120	16.4%	11.8%
Դեկտեմբեր 2021	40,553.2	224.3	6.49	0.18	485.14	882,240	7,368,017	18.1%	10.9%
Հունվար 2022	19,036.1	879.7	3.05	0.70	481.99	918,552	6,910,993	17.4%	11.6%
Փետրվար 2022	24,571.6	409.2	3.93	0.33	480.24	861,543	6,700,601	18.6%	11.9%
Մարտ 2022	28,056.3	573.7	4.49	0.46	496.96	914,872	7,304,904	17.5%	11.0%
Ապրիլ 2022	34,471.3	408.3	5.52	0.33	470.99	886,759	6,747,489	18.0%	11.9%
Մայիս 2022	43,737.1	756.3	7.00	0.61	456.54	794,497	7,293,766	20.1%	11.0%
Հունիս 2022	40,805.5	1,527.9	6.53	1.22	422.69	727,710	6,312,805	22.0%	12.7%

Այս պարագայում օրենսդրության կայունությունն ապահովելու և ներդրումների ներգրավման տեսանկյունից, հետազոտության շրջանակներում կարևորվել է հատուկ պայմանագրերի առկայությունը: Գրավիչ ներդրումային դաշտ ունենալը կարևոր է հատկապես ոչ ռուսական կապիտալով ներդրողներ կամ ընկերություններ ներգրավելու համար՝ հաշվի առնելով ներկայիս ռուսական կապիտալի դերակատարումը ոլորտում: Կարևորվում է նաև հետագայում հնարավոր պատժամիջոցներից խուսափելու հանգամանքը, որպեսզի չխաթարվի ոլորտի գործունեությունը: Ինչ վերաբերում իրական ՀՆԱ-ի աճի փոփոխությունների բացատրման գործում արտահանման դերին, ապա կարևորվում է միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում արտահանման ծավալների աճը՝ հատկապես պայմանավորված նոր ընկերությունների ներգրավմամբ: Սակայն, ցանկալի կլինի, որ արտահանման ծավալների աճն ուղեկցվի այլ ապրանքների արտահանման ծավալների աճով (հատկապես գիտատար), որպեսզի մետաղների գների

[13] ՀՀ ՎԿ-ի «Արտաքին առևտրի տվյալների բազա ըստ ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման», առցանց տվյալների բազա, https://armstat.am/am/?nid=148: ՀՀ օրենքը ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» առ 15.07.2021 թ., ՀՕ-310-Ն: Հասանելի է՝ https://www.arlis.am/documentview.aspx?docid=154959: ՀՀ ԿԲ-ի «Դրամի նկատմամբ որոշ արժույթների միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ փոխարժեքներ» առցանց տվյալների բազա, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx: ՄԱԿ-ի «UN Comtrade» առցանց տվյալների բազա, https://comtradeplus.un.org/: Dokholyan, S. V., Makaryan, A. R., Hayrapetyan, A. A., & Mkrtchyan, H. G. (2023). The mining and quarrying industry in Armenia: changes in fiscal regime and expected impact on tax revenues in the short run. Eurasian Mining, 1 (39), p. 93. doi: 10.17580/em.2023.01.20:

հնարավոր շոկի բացասական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա խորը չլինի: Իսկ կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում ոլորտի ընկերությունների արտահանման ծավալների աճը հիմնականում պայմանավորված է լինելու սպառազինությունների նկատմամբ պահանջարկի աճով:

Ատենախոսության երրորդ՝ ***«ՀՀ արտաքին տնտեսական կապերի առաջնահերթությունները»*** գլխում ներկայացվել է ներմուծման և զբոսաշրջության, ինչպես նաև մետաղական հանքաքարի արդյունահանման դերը ՀՀ տնտեսական աճի ապահովման գործում, նախանշվել են նաև ոլորտային առաջնահերությունները:

Հաշվի առնելով, որ ապրանքների արտահանման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեցող մետաղական հանքաքարի արդյունահանումը ներկայացնող ընկերությունների արտահանման ծավալը (2021 թ.-ին՝ 37.50% ապրանքների արտահանման մեջ, և 8.01% ՀՆԱ-ի համեմատ)[14], ինչպես նաև ծառայությունների կառուցվածքում ՀՀ տարածքում զբոսաշրջիկների կողմից կատարված ծախսերը (2021 թ.-ին՝ 45.19% ծառայությունների արտահանման մեջ, և 5.65% ՀՆԱ-ի համեմատ, մինչդեռ 2019՝ թ.-ին համապատասխանաբար 62.78% և 11.22%)[15], հեղինակի կողմից դիտարկվել է վեջիններիս դերը իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունները բացատրելու գործում, ինչպես նաև դիվերսիֆիկացման հնարավորությունները:

Հեղինակի կողմից հետազոտվել է նաև ՀՀ տնտեսական աճի բացատրման գործում ներմուծման դերը և այն, թե ինչպես է արտահանման, և տնային տնտեսությունների վերջնական սպառման վրա ուղղվող ծախսերի աճը հանգեցնում ներմուծման ծավալների փոփոխությանը:

Համաձայն 2012 թ. I եռամսյակից – 2019 թ. IV եռամսյակ ընկած ժամանակահատվածի տվյալների հիման վրա իրականացված գնահատման արդյունքների, հեղինակը բացահայտել է, որ t-րդ ժամանակահատվածում (եռամսյակում) ՀՀ ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների 1%-ով կրճատումը կարող էր հանգեցնել, այդ նույն ժամանակահատվածում, իրական ներմուծման ծավալների 0.333%-ով կրճատմանը, մինչդեռ տնային տնտեսությունների կողմից վերջնական սպառման վրա ուղղվող ծախսերի 1%-ով կրճատումը կարող էր միջինում հանգեցնել իրական ներմուծման ծավալների 0.74%-ով կրճատմանը: 2020 թ.-ի երկրորդ-չորրորդ եռամսյակում իրական արտահանման և տնային տնտեսությունների իրական ծախսերի կրճատումը[16], ակնկալվում էր, որ հանգեցնելու էր իրական ներմուծման ծավալների կրճատմանը շուրջ՝ 24.3, 22.4 և 31%-ով՝ այլ հավասար պայմանների դեպքում:

Ինչ վերաբերում է ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունները բացատրելու գործում իրական ներմուծման դերին, ապա, համաձայն 2012 թ. I եռամսյակից – 2019 թ. IV եռամսյակ ժամանակահատվածի տվյալների հիման վրա իրականացված գնահատման արդյունքների՝ իրական ներմուծման փոփոխությունները չէին բացատրում իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունը:

---

[14] Galoyan, D., Tadevosyan, Z., Makaryan, A., & Mkrtchyan, H. (2024). Mining of Metal Ores Industry and Economic Growth Nexus in Armenia: Challenges and Prospects. Proceedings on Engineering Sciences, 6(2), p. 731, 733, doi: 10.24874/PES06.02.030. Available at: https://pesjournal.net/journal/v6-n2/30.pdf (Date of access: July 21, 2024).

[15] ՀՀ ՎԿ-ի «Վճարային հաշվեկշիռ 6» տվյալների բազա, https://www.armstat.am/am/?nid=203:
Tadevosyan, Z., Makaryan, A., & Mkrtchyan, H. (2023). The role of tourism as the factor ensuring economic growth in the Republic of Armenia: Challenges and prospects. Региональные Проблемы Преобразования Экономики, 10(156), p. 101. doi: 10.26726/1812-7096-2023-10-99-109.

[16] ՀՀ ՎԿ-ի «ՀՆԱ օգտագործումը (հիմնական ծախսային բաղադրիչներով)»՝ ըստ «ԱՀՀ 2008»-ի առցանց եռամսյակային տվյալների բազա, https://www.armstat.am/am/?nid=202:

2012 թ. I եռ. – 2021 թ. IV եռ. տվյալների հիման վրա իրականացված գնահատման արդյունքների համաձայն, հեղինակի կողմից բացահայտվել է, որ t-րդ եռամսյակում ՀՀ ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների 1%-ով աճը կարող է հանգեցնել 0.521%-ով իրական ներմուծման ծավալների ավելացմանը նույն եռամսյակում, մինչդեռ տնային տնտեսությունների կողմից վերջնական սպառման վրա ուղղվող ծախսերի 1%-ով կրճատումը միջինում կարող էր հանգեցնել իրական ներմուծման ծավալների 0.828%-ով կրճատմանը, իսկ իրական ներմուծման ծավալների 1%-ով աճի դեպքում՝ իրական ՀՆԱ-ի միջինում 0.229% աճ կարող էր ակնկալվել՝ այդ նույն եռամսյակում:

2012 թ. I եռ. – 2023 թ. II եռ. տվյալների հիման վրա իրականացված գնահատման արդյունքների համաձայն, հեղինակը բացահայտել է, որ t-րդ եռամսյակում ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների 1%-ով աճը կարող էր հանգեցնել իրական ներմուծման ծավալների 0.516%-ով ավելացմանը, միջինում՝ այդ նույն եռամսյակում, մինչդեռ տնային տնտեսությունների կողմից վերջնական սպառման վրա ուղղվող ծախսերի 1%-ով կրճատման դեպքում՝ կարող էր միջինում իրական ներմուծման ծավալների 0.889% կրճատում արձանագրվել:

Այսպիսով, ներմուծումն սկսել է վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունենալ ՀՀ իրական ՀՆԱ-ի փոփոխությունների բացատրման գործում, որն էլ իր հերթին պայմանավորված է եղել ապրանքների և ծառայությունների արտահանման գործում ներմուծման դերի ավելացմամբ, ինչպես նաև տնային տնտեսությունների կողմից վերջնական սպառմանն ուղղված ծախսերի աճով, որը ՀՀ փոքր շուկայի և ՌԴ ռուբլու նկատմաբ ՀՀ դրամի արժևորման պայմաններում հանգեցնում է ներմուծման ծավալների աճին: Դա նաև փաստում է մի շարք մարտահրավերների մասին, որոնք ՀՀ-ն պետք է հաղթահարի: Առաջնահերթություններից է համարվում հատկապես մշակող արդյունաբերության հետագա ծավալների անկումը կանխելու, ինչպես նաև գյուղատնտեսական ծագում ունեցող ապրանքների արտահանման ծավալների աճի նպատակով համապատասխան միջոցառումների մշակումը, որի բաղադրիչ մասը կարող է լինել հատկապես միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում մշակող արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը ներկայացնող համեմատական առավելություններ ունեցող ապրանքների դիվերսիֆիկացումը՝ ըստ շուկաների, ինչպես նաև ՀՀ-ից արտահանվող ապրանքերի կառուցվածքում ՀՀ-ում ստեղծված ավելացված արժեքի տեսակարար կշռի մեծացումը:

2012 թ. I եռ. – 2022 թ. I եռ. ժամանակահատվածի տվյալներով իրականացված գնահատման արդյունքների հիման վրա հեղինակը բացահայտել է, որ ՀՀ այցելողների կողմից t-րդ եռամսյակում, 1 դրամով երկրում կատարվող իրական ծախսերի աճը կարող էր հանգեցնել 1.119 դրամով իրական ՀՆԱ-ի աճին՝ այդ նույն եռամսյակում, իսկ 2012 թ. I եռ.–2023 թ. II եռ. երկրում կատարվող իրական ծասերի 1 դրամով աճը կարող էր հանգեցնել 1.155 դրամով իրական ՀՆԱ-ի աճին: Սա փաստել է այցելուների կողմից երկրում կատարվող ծախսերի «մուլտիպլիկատիվ էֆֆեկտի» մասին:

Հեղինակի կողմից բացահայտվել է, որ եթե ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվի 1 դրամով, ապա վերջինս կհանգեցնի զբոսաշրջիկների կողմից ՀՀ տարածքում կատարված իրական ծախսերի ավելացմանը միջինում 117,773,790.4 դրամով: Հետևաբար, ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի բավականին մեծ չափերի հասնող արժևորումը կարող էր հանգեցնել զբոսաշրջիկների կողմից կատարվող իրական

ծախսերի կրճատմանը, իսկ դա էլ, իր հերթին, բացասաբար կազդի ՀՀ տնտեսական աճի վրա:

Հեղինակի կողմից բացահայտվել է, նաև, որ 2012-2023 թթ. (I կիսամյակը ներառյալ իրականացված գնահատման արդյունքներով) զբոսաշրջիկների կողմից ՀՀ տարածքում ծախսերի աճը «մուլտիպլիկատիվ» ազդեցություն է ունեցել ՀՀ տնտեսության վրա: Միևնույն ժամանակ, աճը խորացրել է ՀՀ տնտեսության կախումը զբոսաշրջիկների ծախսերի փոփոխությունից և ավելի խոցելի կդարձնի տնտեսությունը, եթե կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում (2024-2026 թթ.) արձանագրվի զբոսաշրջիկների թվաքանակի կտրուկ կրճատում: Կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում այցելուների թվաքանակի աճը կարող է չհանգեցնել նրանց կողմից կատարվող իրական ծախսերի ավելացմանը և նույնիսկ կարող է բերել կրճատմանը, ինչն էլ բացասաբար կազդի ՀՀ տնտեսական աճի վրա: Արտաքին շոկերի դեպքում (համաշխարհային համավարակի կրկնման պարագայում 2024-2026 թթ.), ՀՀ կառավարության կողմից 2020-2021 թթ. միայն N 23 հակաճգնաժամային մոջոցառման իրականացման նպատակով տրամադրված աջակցությունից ավելի մեծ ծավալի աջակցություն կպահանջվի:

Համաձայն 2012 թ. I եռամսյակից – 2019 թ. IV եռամսյակ ընկած ժամանակահատվածի տվյալների հիման վրա իրականացված գնահատման արդյունքների, պարզվել է, որ t-4-րդ ժամանակահատվածում (եռամսյակում) պղնձի խտահանքի իրական արտահանման ծավալների 1%-ով կրճատումը կարող էր հանգեցնել 0.058%-ով իրական ՀՆԱ-ի աճին՝ t-րդ ժամանակահատվածում, մինչդեռ մնացած ապրանքատեսակների իրական արտահանման ծավալների փոփոխությունը, ընդհանուր առմամբ, վիճակագրորեն նշանակալի ազդեցություն չէր ունենա իրական ՀՆԱ-ի վրա:

2012 թ. I եռ. – 2019 թ. IV եռ. տվյալների հիման վրա իրականացված գնահատման արդյունքների համաձայն, հեղինակի կողմից բացահայտվել է, որ t-4-րդ եռամսյակում պղնձի խտահանքի իրական արտահանման ծավալների 1%-ով կրճատումը կարող էր հանգեցնել 0.058%-ով իրական ՀՆԱ-ի աճին՝ t-րդ եռամսյակում, ընդհանուր առմամբ, մինչդեռ մնացած ապրանքատեսակների իրական արտահանման ծավալների փոփոխությունը, վիճակագրորեն նշանակալի ազդեցություն չի ունեցել իրական ՀՆԱ-ի վրա:

2012 թ. I եռ. – 2022 թ. IV եռ. տվյալների հիման վրա իրականացված գնահատման արդյունքների համաձայն, բացահայտվել է, որ t-4-րդ եռամսյակում պղնձի խտահանքի իրական արտահանման 1%-ով աճը կարող էր հանգեցնել t-րդ եռամսյակում իրական ՀՆԱ-ի 0.062%-ով կրճատմանը, միջինում, որը միայն նշանակալի էր 10% մակարդակում, իսկ մնացած արտադրատեսակների իրական արտահանման 1%-ով աճը t-րդ եռամսյակում կարող էր հանգեցնել՝ իրական ՀՆԱ-ի կրճատմանը -0.047%-ով, այդ նույն եռամսյակում, ընդհանուր առմամբ, որը սակայն նշանակալի էր 10% մակարդակում: Մոլիբդենի խտահանքի և ֆեռոմոլիբդենի իրական արտահանման t-րդ եռամսյակում 1%-ով աճը կարող էր հանգեցնել՝ իրական ՀՆԱ-ի 0.059%-ով կրճատմանը՝ այդ նույն ժամանակահատվածում, իսկ արդեն 2012 թ. I եռ. – 2023 թ. II եռ. ընկած տվյալների հիման վրա իրականացված գնահատման արդյունքների՝ իրական ՀՆԱ-ի 0.059%-ով կրճատմանը ևս: Միևնույն ժամանակ, պղնձի խտահանքի իրական արտահանման ծավալների փոփոխությունը չէր բացատրում իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունը: Աննշան բացասական ազդեցությունը բացատրվում էր այն հանգամանքով, որ իրական արտահանման ծավալների փոփոխության դեպքում, երբ,

ընդհանուր առմամբ, իրական ծավալների աճ էր գրանցվում, ապա դա ուղեկցվել է ՀՆԱ-ի աճի բացասական տեմպով և ընդհակառակը՝ ծավալների աճի դեպքում, տնտեսական անկում էր գրանցվում, երբ իրական ծավալները կրճատվում էին և իրական ՀՆԱ-ն աճ էր արձանագրում: Խտահանքի արտահանումը գերազանցապես պայմանավորված է համաշխարհային շուկայում գների տատանումներով և տնտեսական աճով չի բացատրվում արտահանման ծավալների փոփոխությունը, ինչպես նաև ընկերությունների կողմից որդեգրած մարտավարություններով (գների անկման դեպքում տեղի էր ունենում ֆիզիկական ծավալների աճ և ընդհակառակը):

Մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտը ներկայացնող ընկերությունների արտահանման առումով, ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորված լինելու պարագայում՝ համաշխարհային շուկայում գների աճը ՀՀ դրամով արտահայտված հասույթի աճի տեսանկյունից վճռորոշ է լինելու: Մյուս կողմից, համաշխարհային շուկայում գների բարձրացումը, որը նաև արտացոլում է համաշխարհային տնտեսության զարգացմանը վերաբերող կանխատեսումների սպասումները, նպաստում է նրան, որ տվյալ ոլորտում նոր ներդրումներ ներգրավվեն՝ հատկապես ակնկալվող սպառազինությունների վրա ուղղվող ծախսերի աճի առումով:

Միևնույն ժամանակ, հետազոտությունում ստացված արդյունքները փաստում են, որ միայն ֆիզիկական ծավալների շարունակական աճը կարող է հանգեցնել նրան, որ ոլորտի ընկերությունների կողմից ստեղծած արդյունքն սկսի իրական ՀՆԱ-ի վրա վիճակագրորեն նշանակալի դրական ազդեցություն ունենալ: Եվ դա վերաբերելու է բոլոր արտահանվող արտադրատեսակներին, այլ ոչ թե միայն մեկ արտադրատեսակի արտահանման աճին, և որն էլ կփոխհատուցի այլ արտադրատեսակի գծով գրանցված արտահանման ծավալների անկումը: Նոր ներդրումների ներգրավումը նաև ուղղված կլինի արտահանվող ծավալների աճին, որը թույլ կտա հանքագործական արդյունաբերությանը աճ գրանցել: Իրականացված գնահատման արդյունքների հիման վրա բացահայտվել է, որ մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտը ներկայացնող ընկերությունների իրական արտահանման ծավալների աճը չի ասոցացվում իրական ՀՆԱ աճի հետ: Համաշխարհային տնտեսության զարգացումները կարող են խթանել տվյալ ոլորտի արտահանման ծավալների աճին, սակայն դա ոչ միշտ է, որ կհանգեցնի տնտեսական աճի, իսկ տնտեսական աճը ՀՀ-ում հիմնականում պայմանավորված է եղել այլ ոլորտների կատարողականով: Հետևաբար, որպեսզի ընկերությունների իրական արտահանման ծավալների աճն սկսի վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունենալ իրական ՀՆԱ-ի վրա՝ ի պատասխան համաշխարհային պահանջարկի աճի, ապա առաջնահերթությունը պետք է լինի միջնաժամկետ հատվածում իրական արտահանման ծավալների զգալի աճը, որը կարող է ապահովվել նաև նոր ներդրողների ներգրամամաբ: Նոր ներդրումների ներգրավման տեսանկյունից առաջնայինը ներդրումային միջավայրի բարելավումն է՝ մասնավորաբար օրենսդրության կայունության տեսանկյունից:

<u>Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների հիման վրա հեղինակը հանգել է հետևյալ եզրակացություններին՝</u>

- Բացահայտված սիմետրիկ համեմատական առավելությունների ինդեքսի (RSCA), նորմալացված բացահայտված համեմատական առավելությանների ինդեքսի (NRCA) և առևտրային հաշվեկշռի ինդեքսի (TBI) համակցման միջոցով իրականացված ապրանքների քարտեզավորման միջոցով բացահայտվել է, որ ՀՀ-ի պարագայում բացահայտված առավելություններ ունեցող և «զուտ արտահանող» համարվող խմբերը հիմնականում

ներկայացնում են գյուղատնտեսությունը, խմիչքների, ծխախոտային արտադրատեսակների, հագուստի արտադրությունները, հանքագործական արդյունաբերությունը և հիմնական մետաղների արտադրությունը: Համեմատական առավելություն ունեցող և «զուտ ներմուծող» համարվող խմբերը ներկայացրել են սննդամթերքի և հագուստի արդյունաբերությունը, ինչպես նաև ներառված են ծառեր, ծաղիկներ, մրգեր, կավից, ապակուց և ալյումինից պատրաստված արտադրատեսակներ:

- ՀՀ արտահանման կառուցվածքում բացահայտված ուժեղ համեմատական առավելություններ ունեցող և արտարժույթ ապահովող ապրանքախմբերի (գերազանցապես ՀՀ ծագում ունեցող) պարագայում բավականին մեծ կախվածությունը մնում է մեկ շուկայից՝ ՌԴ-ից, իսկ մեկ շուկայից կախումը ՀՀ տնտեսությունը խոցելի է դարձնում ՌԴ շուկայում տեղի ունեցող զարգացումներից: Համեմատական առավելություն ունեցող և «զուտ ներմուծող» համարվող արտահանվող խմբերը ևս հիմնականում արտահանվում են դեպի ՌԴ:
- Բացահայտված միտումները փաստում են այն մասին, որ զբոսաշրջիկների թվաքանակի շարունակական աճի դեպքում, այն հանդես կգա որպես ՀՀ տնտեսական աճի ապահովման կարևոր գործոն: 2021-2022 թթ. զբոսաշրջիկների թվաքանակի աճն ուղեկցվել է մեկ այցելուի հաշվով իրական ծախսերի ավելացմամբ, իսկ 2022 թ.-ին աճը (ՀՀ դրամով արտահայտված) մասնավորաբար բացատրվում էր ՀՀ դրամի ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորմամբ, ինչպես նաև ՀՀ տարածքում ավելի շատ ծառայություններ և ապրանքներ ձեռք բերելու հանգամանքով:
- ՌԴ-ից զբոսաշրջիկների թվաքանակի կրճատումը՝ ՀՀ զբոսաշրջության ոլորտը դարձնում է բավականին խոցելի: Եթե ԵՄ-ից, ինչպես նաև միջինից բարձր եկամուտ ունեցող երկրներից, զբոսաշրջիկների թվաքանակն աճի, ապա այն կարող է որոշակիորեն փոխհատուցել ՌԴ-ից այցելուների թվաքանակի կրճատման կորուստները: ՌԴ տնտեսական շոկով պայմանավորված՝ ՀՀ այցելուների ծախսերի կրճատման պարագայում վճռորոշը լինելու է փոխաժեքի՝ որպես ՌԴ տնտեսական աճի շոկի բացասական ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա տարածող ուղի:
- Գնային մրցունակության տեսանկյունից (ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորված ՀՀ դրամի պարագայում) մարտահրավեր է լինելու այլ երկրների հետ մրցակցությանը դիմակայելը և զբոսաշրջիկ ներգրավելը՝ մատչելի կացարանների և հանգրվանատների առկայության, ինչպես նաև յուրահատուկ պրոդուկտների առաջարկներով՝ ՀՀ-ն ավելի գրավիչ երկիր դիրքավորելու կտրվածքով, հատկապես Արևմտյան և մեկ շնչի հաշվով միջինց բարձր եկամտի մակարդակ ունեցող երկրների համեմատ:
- 2021 թ.-ին ապրանքների արտահանման կառուցվածքում մետաղական հանքաքարի արդյունահանման ոլորտը ներկայացնող ընկերությունների արտահանման մասնաբաժնի բարձր տեսակարար կշիռը հիմնականում պայմանավորված է եղել արտադրանքի ավելի բարձր գներով արտահանմամբ:
- ՀՀ ներքին շուկան բավականին փոքր է և ՀՀ տնային տնտեսություններին չի կարող ապահովել ապրանքների և ծառայությունների լայն տեսականիով, ինչպես նաև 2022 թ.-ից սկսած ԱՄՆ դոլարով արտահայտված ՀՀ դրամի՝ ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորումը հնարավորություն է տվել ՀՀ-ում արտադրված ապրանքների փոխարեն ձեռքբերել այլ երկրների ծագում ունեցող նմանատիպ ապրանքներն՝ ավելի էժան, ինչպես նաև գնել ՀՀ-ում չարտադրվող ապրանքները կամ ծառայությունները ավելի մատչելի տարբերակով: ՀՀ-ում ստեղծված և արտահանվող ապրանքների և ծառայությունների ավելացված արժեքի նվազումը, որը բացատրվում էր նաև մեկ շուկայից խոցելիությունով,

ինչպես նաև ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորմամբ, նշանակում է, որ ՀՀ ընկերությունները արտահանելիս, հնարավոր է ավելի ցածր շահութաբերությամբ են աշխատել: Սա նաև հանգեցրել է նրան, որ արտահանման ծավալների աճի գործում ներմուծման դերը մեծացել է, որի հետևանքով էլ ներմուծումը սկսել է բացատրել ՀՀ իրական ՀՆԱ-ի վիճակագրորեն նշանակալի փոփոխությունը, որը բացատրվում էր նաև տնային տնտեսությունների կողմից վերջնական սպառմանն ուղղված ծախսերի աճով:

<u>Ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա կատարվել են հետևյալ առաջարկությունները՝</u>

- Տնտեսության առջև ծառացած մարտահրավերներին դիմակայելու լավագույն առաջնահերթությունն արտահանման վրա հիմնված տնտեսական աճն է՝ հատկապես դիվերսիֆիկացված, որի բաղկացուցիչը նաև ներմուծման ծավալների աճի միջոցով դրա ապահովումն է, և որը հիմնականում չի ուղղվում ներքին պահանջարկը բավարարելուն: Կարճաժամեկտ-միջնաժամկետ հատվածում ՀՀ կառավարության առաջնայնությունը պետք է լինի արտահանման ծավալների աճ ապահովել մինչև որևէ շոկի արձանագրումը:
- Կարևորվում է դեպի ԵՄ ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների աճն սկսած միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում: Ինչ վերաբերում է ավելի լայն դիվերսիֆիկացմանը (ավելի բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների և/կամ ծառայությունների և շուկաների կտրվածքով), ապա ՀՀ-ն կարող է սկսել կենտրոնանալ բարձր տեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների արտադրության և/կամ մատուցման վրա, ինչպես նաև վերջիններիս արտահանման խթանմանը միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում:
- Միջնաժամկետ-երկարաժամկետ հատվածում ԵԱՏՄ-ից դուրս գալու և ապագայում ԵՄ-ին անդամակցելու պարագայում ՀՀ-ն կկարողանա նաև ներգրավվել լայն սպառման համար չնախատեսված, բարձր տեխնոլոգիական ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման մեջ: Այդ ապրանքների արտահանման շուկաները կարող են լինել ինչպես Ծոցի երկրները, այնպես էլ ԵՄ-ն՝ հաշվի առնելով «nearshoring»-ը, աշխատավարձերի մակարդակը, ինչպես նաև համապատասխան մասնագետների առկայությունը:
- ՀՀ կառավարության առաջնահերթությունները պետք է լինեն ապրանքների արտահանման դիվերսիֆիկացումը՝ ըստ շուկաների անհրաժեշտ ստանդարտներին համապատասխան, ինչպես նաև նվազեցնել ՀՀ տնտեսության խոցելիությունը ՌԴ տնտեսությունից՝ մշակելով հստակ հայեցակարգ/ռազմավարություն, որի հիման վրա կմատնանշվեն մեծամասամբ ներքին շուկայի պահանջարկը բավարարող ոլորտների աջակցության ծրագրերի ամբողջական փաթեթները:
- ՀՀ կառավարության առաջնահերթությունը պետք է նաև լինի կարճաժամկետ-միջնաժամկետ հատվածում տնտեսության դիվերսիֆիկացումը՝ ըստ արտահանման շուկաների՝ ՌԴ-ից զբոսաշրջիկների թվաքանակի առնվազն պահպանման և/կամ որոշակի կրճատման դեպքում՝ ՀՆԱ-ի մեկ շնչի հաշվով միջինից բարձր և բարձր եկամտի մակարդակ ունեցող այնպիսի երկրներից, ինչպիսիք են ԵՄ անդամ-երկրները, Ծոցի համագործակցության խորհրդի երկրները, Չինաստանը և այլն:
- ՀՀ-ի տեսանկյունից կարևորվում է հատկապես 2-աստղանի հյուրանոցների, մատչելի կացարանատների առկայությունը (Երևանի արվարձաններում և մոտակա բնակավայրերում, ինչպես նաև գրավիչ զբոսաշրջային կենտրոնների մոտակայքում), որի նպատակը պետք է լինի միջնաժամկետ հատվածում՝ ՀՀ դրամի շարունակական արժևորման դեպքում զբոսաշրջիկների թվաքանակի որոշակի անկումը կանխելը:

• 2024-2026 թթ. ՌԴ-ից զբոսաշրջիկների թվաքանակի հնարավոր կտրուկ անկման պարագայում ՀՀ կառավարությունը պետք է բյուջեում նախատեսի ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեին ուղղվող ծախսերի ավելացում՝ այլ երկրներից զբոսաշրջիկների ներգրավմանն ուղղված մարքեթինգային որոշակի միջոցառումների համաֆինանսավորման նպատակով՝ ոլորտը ներկայացնող ընկերությունների համար:

• Թեև ներդրողներին հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում ՀՀ-ում կարող է տրվել 5 տարի ժամկետ՝ թույլ տալով նրանց հետագայում օգտվել ներդրման պահին գործող հարկային ռեժիմից, այնուամենայնիվ, հայտնաբերումը և հանքի կառուցման ժամկետը կարող է գերազանցել 5 տարին, և կպահանջվեն լրացուցիչ խթաններ հանքարդյունաբերության ոլորտում նոր ներդրումների ներգրավման համար: Հետևաբար, Չիլիի օրինակով ՀՀ կառավարությունը կարող է առաջարկել կայունության հատուկ համաձայնագրեր՝ մինչև 10-15 տարի ժամկետով (կախված նախագծերից), որպեսզի հանքարդյունաբերությունը համարվի ՕՈՒՆ-ների տեսանկյունից գրավիչ ոլորտ նոր ներդրողների համար՝ միաժամանակ ՀՀ-ում ձևավորելով բարենպաստ և գրավիչ ներդրումային միջավայր ինչպես ոլորտի հիմնական մասնակիցների, այնպես էլ օտարերկրյա ներդրողների համար:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Dokholyan, S. V., Makaryan, A. R., Hayrapetyan, A. A., & Mkrtchyan, H. G. (2023). The mining and quarrying industry in Armenia: changes in fiscal regime and expected impact on tax revenues in the short run. Eurasian Mining, 1 (39), 90–96. doi: 10.17580/em.2023.01.20. (Scopus Q2).
2. Galoyan, D., Tadevosyan, Z., Makaryan, A., & Mkrtchyan, H. (2024). MINING OF METAL ORES INDUSTRY AND ECONOMIC GROWTH NEXUS IN ARMENIA: CHALLENGES AND PROSPECTS. Proceedings on Engineering Sciences, 6(2), 731–744. doi: 0.24874/pes06.02.030. (Scopus Q4).
3. TADEVOSYAN, Z., MAKARYAN, A., & MKRTCHYAN, H. (2023). THE ROLE OF TOURISM AS THE FACTOR ENSURING ECONOMIC GROWTH IN THE REPUBLIC OF ARMENIA: CHALLENGES AND PROSPECTS. Региональные Проблемы Преобразования Экономики, 10 (156), 99–109. doi: 10.26726/1812-7096-2023-10-99-109. (ВАК, РФ, К-2).
4. TADEVOSYAN, Z. A., MAKARYAN, A. R., & MKRTCHYAN, H. G. (2024). THE ROLE OF IMPORTS AS THE FACTOR OF ENSURING ECONOMIC GROWTH IN ARMENIA: CHALLENGES AND PROSPECTS. Региональные Проблемы Преобразования Экономики, 5 (163), 223–232. doi: 10.26726/1812-7096-2024-5-223-232. (ВАК, РФ, К-2).
5. MKRTCHYAN, H. G. (2024). PRODUCTS MAPPING: THE CASE OF ARMENIA. Региональные Проблемы Преобразования Экономики, 5 (163), 258–271. doi: 10.26726/1812-7096-2024-5-258-271. (ВАК, РФ, К-2).

ГАМЛЕТ ГРИГОРЬЕВИЧ МКРТЧЯН

ПРИОРИТЕТЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РА В КОНТЕКСТЕ ГЛОБАЛЬНЫХ ЭКОНОМИЧЕСКИХ ВЫЗОВОВ

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 00.06 - «Международная экономика».

Защита диссертации состоится 30-го Января 2025 г., в 14^{00}, на заседании Специализированного совета 014 КВОН РА по экономике, действующего при Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Мировую экономику никогда не характеризовали как непрерывно развивающуюся или восходящую. Конфликты и кризисы - топливно-энергетические, финансовые и экономические, обостряющаяся экономическая конкуренция между ведущими странами мира, политические разногласия и демографические проблемы — постоянно порождают множество вызовов, вынуждая мировое сообщество искать наиболее эффективные пути их преодоления.

Смягчение последствий внешних потрясений, особенно для стран с небольшой экономикой и узкими внутренними рынками, требует обеспечения экономического роста за счет экспортного сектора, диверсификации рынков и расширения ассортимента товаров. После 44-дневной Арцахской войны изменилась как международная, так и внутренняя ситуация в Армении. Следовательно, невозможно осуществить внутренние преобразования без учета геополитического и геоэкономического контекста Армении, масштабов ее экономических, демографических и социальных вызовов и, прежде всего, возможностей ее человеческого капитала. Решение внешних проблем также имеет ключевое значение для внешней безопасности Армении, которая тесно связана с безопасностью внешней торговли.

Современные тенденции развития международных экономических отношений, характеризующиеся сложными межгосударственными отношениями, растущим конфликтным потенциалом, торговыми войнами и нарушением санкций, свидетельствуют о том, что, несмотря на многочисленные преимущества международной торговли, существуют также существенные риски для национальной экономической безопасности. Выявление конкурентных преимуществ в экспорте и импорте в приоритетных секторах, направленных на диверсификацию внешних рынков и противодействие глобальным вызовам, имеет жизненно важное значение. Это подчеркивает актуальность данной диссертации.

Объект и предмет исследования. Объектом исследования являются приоритеты развития экономики Армении, вытекающие из вызовов мировой экономики, а **предметом** исследования является выявление возможностей диверсификации экономических связей в свете преодоления угроз развитию внешнеторговых отношений Армении.

Целью настоящего исследования является формулирование приоритетов экономического развития РА в разрезе сфер, имеющих существенное значение с точки зрения экономического роста РА, в результате анализа уязвимости экономики РА перед

глобальными вызовами и их воздействия. Для достижения указанной цели в рамках диссертации были поставлены следующие **задачи:**

- изучить и выявить вызовы современной мировой экономики, показатели, прогнозирующие уязвимость отдельных национальных экономик, и приоритеты развития, а также на основе эмпирических оценок уточнить основные пути передачи воздействия внешних шоков на экономику Армении,
- изучить и определить обоснованность гипотез экономического роста, основанных на росте импорта, экспорта, а также добычи полезных ископаемых и туризма (на примере других стран),
- разъяснить конкурентные преимущества Армении на основе картирования экспортных групп и расчета ряда индексов, указать на существующие проблемы и возможности диверсификации экспорта,
- изучить влияние глобальных развитий на туристическую сферу Армении, выявить уязвимость и роль последней в экономике, а также в результате эконометрической оценки определить приоритеты развития сферы,
- определить влияние глобальных событий на добычу металлической руды в Армении, уязвимость сектора,
- оценить роль и приоритеты развития импорта и туризма как факторов обеспечения экономического роста в Армении,
- оценить роль добычи металлической руды в обеспечении экономического роста Армении, в результате эконометрической оценки определить приоритеты развития отрасли, в том числе инвестиционной среды.

В данной работе было была оценена роль импорта товаров и услуг, расходов туристов на территории Армении, экспорта компаний, представляющих сектор добычи металлической руды, в объяснении статистически значимых изменений реального ВВП. Тем же методом была также оценена роль реального экспорта товаров и услуг, расходов на конечное потребление домашних хозяйств в импорте товаров и услуг и в объяснении статистически значимых изменений в количестве туристов, посетивших Армению, в расходах, понесенных туристами на территории Армении.

Проделанный анализ дал возможность получить следующие прикладные результаты, представляющие **научную новизну:**

- На основе картирования товарных групп, экспортируемых из Армении, и расчета ряда индексов были выделены товарные группы с конкурентными преимуществами, а также определены подходы к диверсификации экономики, внешних рынков и экспорта.
- С использованием эконометрических моделей была оценена роль ряда факторов-импорта, экспорта и расходов домашних хозяйств на конечное потребление-в обеспечении экономического роста Армении.
- С использованием эконометрического инструментария был оценен вклад туристического сектора Армении в экономический рост, а также выявлена его уязвимость перед внешними шоками.
- В результате анализа влияния законодательных изменений в налогообложении горнодобывающей промышленности и эконометрической оценки была выявлена роль компаний, занимающихся добычей металлической руды, в обеспечении экономического роста Армении, были обозначены ключевые вызовы отрасли и предложены возможные меры для её развития.

HAMLET GRIGOR MKRTCHYAN

PRIORITIES OF RA'S ECONOMIC DEVELOPMENT IN THE CONTEXT OF GLOBAL ECONOMIC CHALLENGES

Abstract of the thesis for receiving the scientific degree of PhD in economics in the field 00.06 - "International Economics."

The defense of the thesis will take place on January 30, 2025 at 14^{00}, at 014 Council of Economics of HESC RA at the Armenian State University of Economics: 128 Nalbandyan Str., Yerevan 0025, RA.

ABSTRACT

The global economy has never been characterized as continuously evolving or upward-moving. Conflicts and crises-fuel and energy, financial and economic, escalating economic competition among the world's leading nations, political differences, and demographic challenges-have continuously fueled a formidable array of challenges, pressing the global community to seek the most effective ways to overcome them.

Mitigating the effects of external shocks, particularly for countries with small economies and narrow domestic markets, requires ensuring economic growth through the export sector, market diversification, and expanding the range of goods. After the 44-day Artsakh war, both the international and internal situations in Armenia have shifted. Consequently, it is impossible to undertake domestic transformations without considering Armenia's geopolitical and geo-economic context, the scope of its economic, demographic, and social challenges, and, above all, the capabilities of its human capital. Addressing external challenges is also crucial to Armenia's external security, which is closely tied to the security of foreign trade.

Current trends in the development of international economic relations-characterized by complex interstate relations, rising conflict potential, trade wars, and sanctions violations-suggest that, despite the many advantages of international trade, there are also substantial risks to national economic security. Identifying competitive advantages in exports and imports within priority sectors aimed at diversifying foreign markets and countering global challenges is vital. This underscores the relevance of this dissertation.

The object and subject of the study. The **object** of the study is the priorities of the development of the Armenian economy arising from the challenges of the global economy, and the **subject** of the study is to identify opportunities for diversifying economic ties in the light of overcoming threats to the development of Armenia's foreign trade relations.

This study **aims** to formulate Armenia's economic development priorities by identifying key areas critical for its economic growth. It will do this by analyzing Armenia's economy's vulnerability to global challenges and their impacts. The following **tasks** have been set within the dissertation framework to reach this objective:

- Study and determine the validity of hypotheses of economic growth based on the growth of imports, exports, as well as mining and tourism (using the example of other countries),
- Explain Armenia's competitive advantages based on mapping export groups and calculating several indices, to point out the existing problems and opportunities for export diversification,

- Study the impact of global developments on the tourism sector of Armenia, to identify the vulnerability and role of the latter in the economy, as well as, as a result of an econometric assessment, to determine the priorities of the development of the sphere,
- Determine the impact of global events on the extraction of metal ore in Armenia, the vulnerability of the sector,
- Assess the role and priorities of import and tourism development as factors of ensuring economic growth in Armenia,
- Assess the role of metal ore mining in ensuring Armenia's economic growth through an econometric assessment to determine the priorities for the industry's development, including the investment environment.

In this work, the role of imports of goods and services, tourist spending on the territory of Armenia, and exports of companies representing the metal ore mining sector in explaining statistically significant changes in real GDP was assessed. The same method also assessed the role of real exports of goods and services, household final consumption expenditures in the import of goods and services and in explaining statistically significant changes in the number of tourists visiting Armenia, in the expenses incurred by tourists in Armenia.

The analysis made it possible to obtain applied scientific results representing **scientific novelty:**

- Based on the product mapping of groups exported from Armenia and the calculation of various indices, commodity groups with competitive advantages and approaches to diversifying the economy, foreign markets and exports were identified.
- Using econometric models, the role of several factors—imports, exports, and household expenditures—in final consumption driving Armenia's economic growth was assessed.
- Employing econometric tools, the contribution of Armenia's tourism sector to economic growth was evaluated, and its vulnerability to external shocks was revealed.
- Through an analysis of the impact of legislative changes in the taxation of the mining industry and econometric assessment, the role of metal ore mining companies in driving Armenia's economic growth was identified, key challenges facing the industry were highlighted, and potential measures for its development were proposed.